



ԼԵՌԱՎԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2005թ.

N 174

ք.Ստեփանակերտ

ԼԵՌԱՎԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
ՄԽՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ԵՎ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ, ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՄԻ ՕԲՅԵԿՏ
ՀԱՍԴԻՄԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՄԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոնները՝ համաձայն հավելվածի:

ԼՂՎՎԱՐՁԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«_____» 2005թ.
թիվ _____ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԼԵՇԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՍԻ ԵՎ ՁԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ,
ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐՍԻ ՕԲՅԵԿՏ ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՐՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության, ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի (այսուհետ սիրողական որսի և ձկնորսության) իրականացման միջոցները, նորագույն տեխնոլոգիաները և ժամանակակից սահմանվող սահմանափակությունները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սիրողական որսի և ձկնորսության օբյեկտ հանդիսացող կենդանիների ցանկում նշված վայրի կենդանիները համարվում են որսի տեսակներ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սիրողական որսը թույլատրվում է «Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված որսորդական զենքների օգտագործմամբ:

II. ՈՐՍԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում արգելվում է՝

ա) բնակավայրերից, բնակչության հանգստի գոտիներից, բնակչության հանգստի համար օգտագործվող այլ տարածքներից և ավտոմայրուղիներից որպի նպատակով որսորդական ակոսավոր հրազեն գործադրելը, առնվազն 5000 մետր, իսկ ողորդավոր որսորդական հրազենը՝ 500 մետր հեռավորությունից.

բ) որսն իրականացնել առանց տվյալ անձի որսորդական զենք պահելու և կրելու թույլտվություն իր հետ ունենալու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սիրողական որս և ձկնորսություն իրականացնելու իրավունքը հաստատող փաստաթղթի.

գ) օրենքով սահմանված կարգով չհաշվառված, օբյեկտների պահպանության համար հատկացված որսորդական հրազենը, ինչպես նաև մարտական զենքը և մարտական փամփուշտը որսի նպատակով գործադրելը.

դ) տվյալ որսատեսակին չհամապատասխանող փամփուշտով կամ տվյալ զենքի համար նախատեսված հեռահարությունից ավելի հեռու գտնվող կենդանիների վրա կրակելը.

ե) ջրային տարածքներում, կերիանդակներում (արոտավայրերում և խոտհարքներում) և ցանքատարածքային ակոսավոր որսորդական հրազեն գործադրելը.

գ) աղեղներ, ծուղակներ (փոսեր), ցանցեր և օդակներ կիրառելը.

է) ծլսի, քիմիական և պայթուցիկ նյութերի կիրառմամբ վայրի կենդանիների որսը բացառությամբ հոտավետ խայծերի.

ը) որսի ժամանակ լուսարձակներ կամ լուսային այլ հզոր սարքավորումներ կիրառելը.

- թ) մեխանիկական տրանսպորտային միջոցներ կիրառելը.
- Ժ) ձվեր հավաքելը, ձագերին բներից հանելը, կենդանիների բների ու որչերի քանդելը.
- ԺԱ) կենդանիների ապրենավայրերը և հավաքատեղերը վնասեն ու ոչչացնելը.
- ԺԲ) բնական աղետներից փրկվող և այլ անօգնական վիճակում գտնվող կենդանիների որսը.
- ԺԳ) Էլեկտրոնային ծայն վերարտադրող սարքեր և մագնիստոֆոններ կիրառելը.
- ԺԴ) առանց թույլտվության վայրի կենդանիներին անազատ պայմաններում պահելը:
- ԺԵ) Էլեկտրական հոսանքով որս կատարելը:

III. ՈՐՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ (ՈՐՄԱՇՐՋԱՆՔ)

5. Յուրաքանչյուր տարվա համար սիրողական որսի որսաշրջանը սահմանում է կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)` կենդանական աշխարհի ուսումնասիրող սուբյեկտների կողմից օրենքով սահմանված կարգով կատարված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

6. Որսաշրջանի բացումից առաջ 2 ամիս առաջ լիազորված մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանում է որսորդական տեսակների գանկը, յուրաքանչյուր որսորդական տեսակի որսի ժամկետները, չափարանակները և վայրերը, որի մասին առնվազն մեկ շաբաթվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով ծանուցում է հասարակայնությանը:

7. Սիրողական ծկնորսության ու որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների յուրաքանչյուր տեսակի որսի և ծկնորսության ժամկետները, չափարանակները և վայրերը, յուրաքանչյուր ներկայացված հայտի դեպքում, նշվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված մարմինի հետ վայրի կենդանիների սցիալական նպատակներով օգտագործման մասին կնքված պայմանագրում:

IV. ՈՐՄՈՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Որսորդների պարտավորությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

V. ՈՐՄԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սիրողական որսի և ծկնորսության իրավունք ունեն սույն կանոններին իրազեկ այն անձինք, ովքեր ունեն որսորդությամբ զբաղվելու իրավունք վերապահող փաստաթուղթ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել են բնօգտագործման վճարները և կնքել սիրողական որսի ու ծկնորսության պայմանագիր, կամ հանդիսանում են այդպիսի պայմանագիր կնքած իրավաբանական անձի անդամներ (աշխատողներ):